ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/23» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «30» մայիսի 2018թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Գրիգոր Գաբրիելյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն, «Կոմպասս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել են Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ի, «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի, «Կոմպասս» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը, որակավորումը և ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող անձնաժողովը որոշեց՝

1. հաստատել հայտերի գնահատման արդյունքները և
-1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին,
-2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Կոմպասս» ՍՊԸ-ին,

2. հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
3. գնումների մասին << օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Էդգար Մելքոնյան

Անդամներ՝ Էդգար Տոնականյան

Գրիգոր Գաբրիելյան

Խորեն Պետրոսյան

Արթուր Թամրազյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան